

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՈՒ ՀՈՂԳՈՂԿՈՄԱՏ
ԶՐԱՅԻ ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

4. S. ՄՄԲԱՅԱՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ
ՎՈՈՈԳՈՒՄԸ



633.5

2153

U-61.

ԱՄՓՈԽՎԻՆ Տ.Ա.:

ԲԱԺԿՈՒՅՑ ՎԱՆԳՆԵՑ.

1939թ. 504.

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՍԶ ՀՈՂՔՈՂԿՈՄԱՏ ԶՐԱՅԻՆ ՏԵՏԵՍՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

633.51:631.6

ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԲԱԺԻՆ

5

ԱՄՓՈԽԱՐԱՐ Հ 1961 թ.

2153

Հ. Տ. ԱՄԲՈՅՅԱՆ

ԲԱՄԲԱԿԵՆՈՒԻ ՎԱՐԴԱԳՈՒՄԸ

A 18391



ՑԵՐԵՎԱՆ

1939 թ.

Խորագիր Գ. ԱղօջանՅան
Տեխ. բարագիր՝ Հ. ՍՄԲԱՏՅԱՆ
Արբագրիչ՝ Թ. ՄԱԴՐԵՑՅԱՆ

Դասկանի լիազոր № 4342, Պատվեր № 7. Տիրաժ 2,509
Հանձնված և արտադրության 20 2 39 թ.
Ստորագրվել և տպադրության 8 3 39 թ.,

Շրջգործկոմի տպարան Վաղարշապատուք

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ՎՈՐՈԳՈՒՄԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բամբակենին իր նորմալ զարգացման և բարձր բերքատվության համար պահանջում և մեծ քանակությամբ չուր:

Ինչպես բոլոր բույսերը, նույնպես և բամբակենին, զարգանում և պտղաբերում ե ի հաշիվ այն սննդանյութերի, վարոնք գտնվում են հողի մեջ ու յուրացվում են արմատների միջոցով, և ի հաշիվ ողի մեջ գտնվող ածխաթթվի, վորը յուրացվում է (ասսիմիլացիայի լի յենթարկվում) տերևների միջոցով։ Հողի մեջ գտնվող սննդանյութերը թափանցում են բույսի մեջ ջրի մեջ լուծված վիճակում։

Բույսի մեջ թափանցած ջրի մեծապույն մասը գոլորշիացնում էն նրա տերևները, իսկ նրա փոքր մասը, ինչպես նաև սննդանյութերը ոգտագործվում են բույսի աճեցողության և շերքի կուտակման համար։

Հայտնի լի, վոր մեկ գրամ բուսական չոր նյութ կուտակելու համար, բույսը գոլորշիացնում է մոտ 500 գրամ ջուր։ Այստեղից պարզ է, վոր բույսերն իրենց նորմալ սննդառության և մեծ բերք կուտակելու համար պետք է ապահովված լինեն անհրաժեշտ քանակությամբ ջրով։

Հողի մեջ ջրի պակասը վոչ միայն զրկում է բույսին ջրից, այլ և նորմալ սնվելուց, քանի վոր ինչպես ասացինք, սննդառութերը կարող են թափանցել բույսի մեջ միմիայն ջրի մեջ լուծված վիճակում։

Բամբակի բարձր բերք ստանալու համար կիրառվող հողի մշակությունը, պարարտ սցումը, պալքարը մոլախստերի դեմ և այլն, վորոնք հիմնականում ուղղված են բույսի զարգացման համար լավագույն պայմաններ ստեղծելուն, կարող են խիստ պակաս եֆեկտ տալ, իեթե դրանց հետ միասին չապահովվի հողի մեջ անհրաժեշտ քանակությամբ ջուրը։

Բույսի զարգացման համար ճիշտ ջրալին ուժիք ստեղծելու հարցը բամբակենու բարձր բերքատվությունն ապահովելու գործում ներկայումս ավելի յև մեծանում, ինը մեր կոլտնահասականները ստախանովյան առաջավոր փորձից յելնելով կիրառում են կորոնտեսային բարձր ագրոտեխնիկա և մեծ քանակությամբ պարարտանյութեր:

Այստեղ անհրաժեշտ ե նշել, վոր Հայաստանի բամբակագործական շրջաններում մթնոլորտալին տեղումները (անձրե, ձյուն և ալլն) շատ սակավ են, միջին հաշվով տարեկան 250—300 միլիմետրից չեն անցնում, վորը վոչ մի դեպքում չի ապահովում բամբակենու ջրի պահանջը, մանավանդ վոր ամռան ամիսներին (հուլիս-օգոստոս), յերբ բամբակենին առավել ջրի կարիք ունի, տեղութիւնների քանակը նվազագույն ե:

Այստեղից պարզ է, թե վորքան մեծ նշանակություն ունի բամբակենու արհեստական վոռոգումը, վոռոգման աշխատանքների ճիշտ կաղմակերպումը և ընդհանուրապես ջրման ճիշտ ձևերի կիրառումն ու ջրի խնայողաբար ծախսումն բամբակի առավել բարձր բերք ստանալու և ալղպիսով մեր կոլտնտեսային յերջանիկ ու ունեսը կլանքն ել ավելի յերջանիկ զարձնելու համար:

ՎՈՐՈԳՄԱՆ ՍԻՍՏԵՄ

Հայաստանի բամբակագործական շրջաններում, մթնոլորտալին տեղումների սակավության հետևանքով, գյուղատնտեսական կուլտուրաները, առանց արհեստական վոռոգման, մշակել հնարավոր չեւ:


Դաշտերի անխափան և կանոնավոր վոռոգումն ապահովելու համար, ինչպես նաև ջրի ճիշտ ոգտագործման համար, կառուցավում ե վոռոգման սիստեմ:

Վոռոգման սիստեմի իրենից ներկալացնում ե մագիստրալ ջրանցքի, բաժանարարների, վոռոգիչների, ջրտար առուների, ջրահեռատար-ջրվան ցանցի և նրանց վրա յեղած կառուցավոր մշտական գործող մի սիստեմ, վորն իր ամբողջ կառուցվածքով նպատակ ունի բավարարելու տվյալ վոռոգվող շրջանի ջրի լրիվ պահանջը:

Այդ կառուցավումների միջոցով ջուրը վերցվում ե վոռոգման աղբյուրից՝ գետերից, լճերից կամ այլ ջրամբարներից, հասցիում ե այն վոռոգման տերիտորիան և բաշխվում ըստ գաշտերի:

այսուհետեւ ջրումից և անձրկներից դոլացած ավելորդ ջրերը
դուրս են բերվում ջրման տերիտորիայից:

Վոռոգման սխալիմի յուրաքանչյուր մասը կատարում է իր
վորոշակի դերը:



Վոռոգման սխալիմի սխեմա

Անցնենք վոռոգման սխալիմի առանձին մասերի համառոտակի նկարագրութանը:

1. Վոռոգման աղբյուր.—Վոռոգման ցանցին մշտապես ջուր
մատակարարելու համար վորպես վոռոգման աղբյուր կարող են
հանդիսանալ զետերը, լճերը, աղբյուրները և այլ ջրամբարները:

Մեր բամբակագործական շրջաններում գործող թե ինժեներական նոր ջրանցքները և թե վոչ ինժեներական հին վոռովաճան սիստեմները ջուր են վերցնում Քյանի—չայ, Վեդի—չայ, Թասախ, Հրազդան, Արաքս և Ան ջուր գետերից ու Ալղը լճից:

Քասախ գետից ջուր են վերցնում Շահարիսի, Հալթաղի, Ֆրդաստանի, Արշալույսի և այլ գյուղերի վոչ ինժեներական հին մանր ջրանցքները, վորոնք ջրում են 4800 հեկտար հող վաղարշապատի շրջանում:

Հրազդան գետից ջուր են վերցնում Վաղարշապատի նոր ինժեներական ջրանցքը, վորը ջրում է 2250 հեկտար տարածություն Վաղարշապատի շրջանում և Ղուերի նոր կառուցված ջրանցքը, վորը ջրում է մոտ 7000 հեկտար հող Ղամարլուի և Վեդու շրջաններում: Արաքս գետից սնվում է Սարդարաբադի մեծ ջրանցքը և ջրում 17,500 հեկտար տարածություն Հոկտեմբերյանի շրջանում:

Բացի Սարդարաբադի մեծ ջրանցքից, Արաքս գետը աղբալուր և հանգիսանում և նրա ջրերով վոռոգվում են Զանգիբարասարի, Ղամարլուի և Վեդու շրջաններում մոտ 1500 հեկտար հողամաս ջրահան տեղակայանների միջոցով, վորոնք դաստվորված են Արաքսի վրա Խալիսա, Ալի Մահմադ, Շիղլու, Կաֆարլու և Ռանչպար գյուղերի մոտ:

Ելեկտրո-ջրահան տեղակայանի միջոցով և սնվում հան Ալղը լճի ջրանցքները, վարոնք ջուր են ստանում Ալղը լճից և վոռոգվում են 2250 հեկտար տարածություն Վաղարշապատի շրջանում:

2. Ակունքային կառուցումներ.—Ակունքային կառուցումը վոռոգման սիստեմի այն մասն եւ, վորի միջացով ջուր և վերցվում վոռոգման աղբյուրից և ապահովվում վոռոգման ամբողջ շանցի ջրի պահանջը: Ակունքային կառուցում են հանգիսանում ափապահները և այլ ժամանակափոր կառուցումները (որինտեկ Քահան, Հրազդան գետերի վրա հին ջրանցքների ակունքում), պատվարներ (Սարդարաբադ ջրանցք) և ջրահան տեղակայաններ Ալղը լճի ջրանցքի:

3. Գլխավոր կամ մագիստրալ ջրանցք:—Գլխավոր կամ մագիստրալ ջրանցքը, վոռոգման սիստեմի այն մասն եւ, վորի միջացով ջուրը վոռոգման աղբյուրից բերվում և վոռոգման տերիտորիայի խորքը և ապա բաժանաբար ցանցի միջոցով բաշխվում վոռոգման ցանցին:

4. Վոռոզման ցանց.—Սա ցանցի այն ժաման է, վորի միջոցով ջուրը խօսր և մանր առվակների միջոցով հասցվում և վոռոզվող դաշտերին և ապահովում նրանց վոռոգումը:

5. Զրիւնի ցանց.—Բացի վոռոգման ջրաբեր ցանցից, գոյություն ուն նաև ջրահավաք և ջրահեռատար ցանց, վորը ջրամներից գոյացած ափելորդ ջրերը հավաքում և լցնում և ջրբաշխ տռուների մեջ, կամ թե չե դուրս և տանում ջրման տերիտորիայից և թափում գետերը:

Այստեղ, վորտեղ ջրահավաք և ջրահեռատար ցանց չկա, ավելորդ ջրերը (առաջացած անձրևներից, ջրումներից) լցվում են ճանապարհներն ու արտերը, կուտակվում են վոս տեղերն ու ճահճանում, դառնալով մալարիալի բներ։ Բացի դրանից այդ լճացող ջրերը վորոց պայմաններում նպաստում են հողի ազտկաբանը:

6. Զրատեխնիկական և ջրաչափական կոռուցումներ։—Բացի ջրաբեր և ջրահեռատար ցանցից վոռոգման սխտիմը պետք է ոժտված լինի ջրատեխնիկական և ջրաչափական սարքավորումով, վորոնց նպաստակն և կանոնավորել ջրանցքների միջով հոսող ջրի քանակը, արագությունը, հորիզոնը և ջուրն ուղղելիքի տարրեր խոչընդունների վրայից փոխադրու հարցերը։

Վոռոգման սխտիմի ջրաբեր ցանցը, հողամասի վրա իշխելու համար, անց և կացվում տեղի ամենաբարձր կետերով և մեծ մասամբ՝ արհեստական թմրերի ոգնությամբ (լիցքով)։ Զրաչափաք և ջրահեռատար ցանցը, ընդհակառակը անց և կացվում տեղի ցածրագիր մասերով, փորվածքների միջոցով։

Վորտեղի կոլանտեսության լուրաքահիչում գաղտում ճիշտ կերպով անցկացվի վոռոգման և ջրվան մանր և մանրագույն ցանցը լուրաքանչյուր բրիգադավար ու ողակալար պետք է ուշի ուղղվ ուսումնասիրի իր դաշտի ուղղելիքը (մակերեսությը) և զրանից յելնելով նպաստականարմար ձևով դասավարի վոռոգման և ջրման մանր ցանցը։

Ազգայի անցնենք այն հարցին թե ինչ ձեզով, չերք և ինչ չափով պետք և կատարել բամբակենու վոռոգմանը

Բամբակենու բարձր բերք ստանալու համար կիրասակող ազ-բուտեխնիկական ձեռնարկումների ջարգում առաջնակարգ տեղ և գրավում բամբակենու ջրի պահանջը բարելավելու հարցը։

Հալտնի յե, վոր բամբակենին իր նորմալ դարգացման և բարձր բերքատվության համար պահանջում և հողի մեջ անհրա-

ժեշտ քանակութիւնամբ սննդանյութեր, ոդ և խոնավութիւնն: Ազգ
հիմնական Յ գործոնների միատեղ և միաժամանակ առկայության
պայմաններում ե, վոր բամբակենու թե ստորթերկրյա և թե վեր-
տերկրյա մասերի զարգացումը ընթանում ե հաջող և աղաճովում
բարձր բերքի կուտակումը:

Բամբակենու բարձր բերք ստանալու գործում մեծ դեր են
խաղում ջրման ձևերը, ժամկետները և նորմանները, վորոնց
մասին կլոսսենք առանձին, առանձին:

ԶՐՄԱՆ ԶԵՎԵՐԸ

Դոյորթյուն ունեն բամբակենու ջրման մի քանի ձևեր, սա-
կայն մեր բամբակացան շրջաններում գործնական նշանակու-
թյուն ունեն և կիրավում են յերկուսը: Դա հենց գործադրվող
սովորական մարգերով ջրելն ե և ջրման նոր ձեզ—ակոսներով
ջրելը:

Վոռողման լավագույն ձևը պետք է համարել այն, վորը—

1. Ապահովում ե հողի համահավասար խոնավացումը:

2. Ջի վատացնում հողի ֆիզիքական հատկություններն ու
նպաստում ե հողի մեջ բուսերի համար մատչելի սննդանյութե-
րի արագ կուտակմանը:

3. Խնարում ե ջրի ծախսումը.

4. Ջրումը կատարվում ե արագ.

5. Ջի խանգարում դաշտալին աշխատանքների մեքենայաց
մանը և ալդ բոլորի հետևանքով՝

6. Ապահովում ե առավել բարձր բերք:


Այս տեսանկյունով անցնենք ջրման առանձին ձևերի քննու-
թյանը:

ԶՐՈՒՄԸ ՄԱՐԳԵՐՈՎ

Մարգերով ջրելը մեր բամբակացան շրջաններում կիրառ-
վում ե շատ հնուց: Այս ձեի ջրման ելությունը կայանում է հե-
տեղվալում: Հողը հերկելուց և ցանքի համար նախապատրաստե-
լուց հետո, համապատասխան հողի թեքությանը դաշտը մարկո-
սում են և բաժանում մարգերի: Այսուհետեւ ջրման ժամանակ
մարգերի մեջ կապում են ջուրը, վորը հոսելով ամբողջ մարգի
յերկարությամբ ներծծվում ե հողի մեջ:

Թեթև և հարթ մակերես ունեցող հողերում մարգերն ավելի լայն և կարճ են անում, իսկ ծանր և թեք հողերում նեղ և լերկար:

ՄԱՐԳԵՐՎ ՁՐՄԱՆ ՄԻԵՍԱ



Պետք ե ասել, զոր մարգերով ջրելք ընդհանրապես հնարավոր և համեմատաբար հարթ մակերես ունեցող հողերում: Զգալի թեքության պայմաններում մարգերով ջրելը, նույնիսկ մարգե-

բը նեղ և յերկար անհեռու դեպքում ել, չի առահովում հողի համահավասար խոնավացումը, վորի հետևանքով բաժբակենին զարգանում և անհավասար:



Զքումը մարդկան

Վորպեսզի ապահովվի դաշտի համահավասար խոնավացում, թեքություն ունեցող հողերում մեր կոլտնտեսականները մարկուսելիս ծուռ ու մոռ թմբեր են քաշում, կոճակներ են տալիս, վորոնք թեպետ և վորոշ չափով նպաստում են հողի հավասարաչափ խոնավացմանը, բայց խիստ խոչընդոտ են հանդիսանում հետագա տրակտորային կուլտիվացիային.

Մարգերով ջրելը ընդհանրապես խիստ բացասաբար և անգրագունում հողի ֆիզիքական հատկությունների վրա, վատացնելով արժատների աննպառության և շնչառության պարագները:

Այդ ձեր ջրման ժամանակ ջուրը վողողում և ամբողջ մարգերի մակերեսը և անմիջականորեն ազգելավ չոր հողի վրա, քաշում և նըա կնծիկները, հողը սվաղվում և չորանալուց ուժեղ կեղեակալում:

Այս ձեռվ ջրիլու հետեանքրով առանձնապես ամուր և հաստ կեղեակալում են ծանր հողերը և դժվարանում և նրանց ողափախութիւնը։ Հողի ողափոխութիւնը նվազելով դժվարանում են առևէ հողի մեջ ապրող ոգտակար բակտերիաների դորժունելութիւնը, վորոնք նորմալ պայմաններում քայլայում են հողի մեջ լիզած ըռուսական միացորդներն ու պարարտանլութերը և սննդա նյութեր կուտակում կուրտաւրական բուշսերի համար։

Վաղարշապատի բամբակագործական փորձակալաւանի զիտուղությանները ցույց են տալիս, վոր մարզերով ջրման դեպքում զգալի չափով ընկնում են հողի մեջ մացված պարարտանյութերի արդյունավետությունը։ Իս բացատրվում է հողի, վերը հիշված ֆիզիքական հատկությունների վատացմամբ։

Հողի կնձիկների քայլայման հետևանքով զգալի չափով բարձրանում են հողի մաղականությունը, գորը նպաստում է հողի առորին շերտերի խոնավության վեր բարձրանալուն և անտեղի գոլորշիցմանը Այդպիսով, հողի մեջ ներծծված ջրի պաշարի զգալի մասը նորից վեր երարձրանում մազանոթների միջոցով և գոլորշիանում հողի մակերեսից, չորտագործվելով բուշսերի կողմից։

Մարգերով ջրման ժամանակ, ջրի վերից վար ուղղահայաց թափանցման հետ մեկտեղ, լվացվում և հողի խորը շերտերն են քշվում վարելաշերտի մեջ կուտակված բույսերին անհրաժեշտ անդանությունը։ Հայտնի է, վոր բամբակենու արմատների զերակառող մասը զարգանում է 0—40 սանտիմետր հողաշերտում։ Պարզ է, վոր հողի անդանութերը ավելի խորը շերտերը լվացվելով հեռանում են բույսի արմատների միջավայրից, վորպիսի հանդամանքը նվազեցնում երամբակենու նորմալ սննդառության հասրավորությունը։

Վերը հիշված հատկանիշներով բնորոշվում են մարգերով ջրման բացասական կողմենը։ Այդ բոլորի հետևանքով մարգերով ջրման պայմաններում բամբակենին, լիսվին չի ապահովվում իր սորմալ զարգացման համար անհրաժեշտ քանակությամբ սննդանլութերով, ողով և ջրով քանի վոր ընդհանրագես վատանում են նրա արմատների զարգացման միջավայրի ֆիզիքական պայմանները, ուստի բամբակի բերքատվությունը զգալի չափով նվազում է։

Չնալած այս բոլորին մարգերով ջրում վորոշ պայմաննե-

բում հանդիսանում ե նպատականարմար ջրման ձև, իս վերաբերվում ե աղակալած հողերին:

Աղակալած հողերում մարգագերով ջրման գեպքում, ջուրը հողի մեջ վերից վար թափանցելու ընթացքում լվանում և իր հետ խորը շերտերն ե տանում հողի վերին շերտերը բարձրացած ավելորդ և մասսակար աղերը, հողի վերին շերտերը լվացվելով ավելորդ և մասսակար աղերից նպաստավոր պայմաններ են ստեղծվում հողի մեջ ապրող բակտերիաների համար, զորոնց գործունեցությունը մինչ ալդ ճնշված եր, հողը հարստանում է բույսերի համար անհրաժեշտ սննդանյութերով, վորի հետևանքով արմատները զարգանում են մասսակար աղերից ազատ միշտվարում:

Ալսպիսով աղակալած հողերի մարգերով ջրումն հանդիսանում ե ջրման նպատականարմար ձև:

Վոչ աղակալած նորմալ հողերի ջրման ամենալավ և նպատականարմար ձեզը պետք է համարել ակոսներով ջրումը, վորի քննությանը անցնենք ալժմ:


ԶՐՈՒՄՆ ԱԿՈՍՆԵՐՈՎ

Ակոսներով ջրումն իր մի շարք առավելությունների շնորհիվ, վորոնց մասին կխոսենք ներքեզում, վերջին տարիների ընթացքում լայն կիրառում ե գտել մեր բամբակագործական ըրջաններում:

Մեր բամբակացան շրջանների յուրաքան չչուր բրիգադավարու ողակավար լավ պետք ե ուսումնասիրի և յուրացնի ակոսային ջըր ման տեխնիկան, կիրառի այն իր դաշտե բում՝ տպահովելու համար բամբակի բարձր բերքատվությունը:


Ակոսային ջրման եյությունը կայանում է հետևյալում:

Դաշտը հերկելուց և լավ փոցիսելուց հետո, համաքում են քարերն ու մոլախոտերի արագատները (չափիր, դանդուրդան) առաջ հարթեցնում խորդ ու բորդությունները:



Հողը հարթեցնելու ձիու սկրեպեր

Այնուհետև կատարում են բամբակի ցանքը, ձիու շարքացանի և կուլտիվացիայի դեպքում շարքը շարքից 60 սմ., իսկ տրակտորային շարքացանի և կուլտիվատորի դեպքում 70 սմ. հեռավորության վրա:




Հողը հարքեցնելու տրակտորային սկրեպեր

Այնուհետև յուրաքանչյուր ջրումից առաջ տրակտորային կուլտիվատորի կամ թե չե ձիու կուլտիվատորի կամ բուզիցի միջոցով բույսաշարքերի մեջ անց են կացնում ակոսներ և ջուրը թողնում ակոսների մեջ։ Այս ձեվով ջրելու ժամանակ ջուրը ակոսներից ծծվում և խոնավացնում ե ամբողջ դաշտը առանց վաղողելու հողի մակերեսը—ակոսների մեջ ընկած տարածությունները։

Գետք և ասել, վոր մեր կոլտնտեսականները ակոսներով ջրում են միայն վեգետացիոն ջրերը, իսկ ծլաջուրը (սապսուվար), կատարում են սովորական մարգերով։ Դրա համար հողը ցանքի

Համար նախապատրաստելուց հետո ուղիղ գծերով՝ մարկոսում
հն ձեռքի կամ տրակտորի մարկոսով և ապա մարգերի մեջ կա-
շաբում ցանքը:



Ենթ. Ա. Մարզանյանի կոնստրուկցիայի տրակտորային մարկոսը
աշխատանքի մեջ

Այնուհետեւ կատարում են ծրագուրը սովորական մարգերով:
Պետք է ասել, վոր ծլաջըի մարգերով կատարելը թե հողի և թե
նոր զոյացող ծիլերի վրա անդրադառնում է բացասաբար, վորի
մասին ասեցինք նախորդ զլիխում: Ամենաեւականը այստեղ հողի
ուժեղ կեղեվակալումն է. վորը խիստ դժվարացնում է ծիլերի
գուրս գալը: Սերմերի ծլումն ապահովելու համար ալս դիպքում
անհրաժեշտ է լինում կատարել լրացուցիչ աշխատանք—կոտրել
կեղեվը փոցխի կամ տափանի միջոցով: Այնուհետև վեզետացիոն
ջրերի ժամանակ անհրաժեշտ է լինում քանդել արդեն իրենց
դիրը կատարած թմբերը և զրանց տեղը նույնպես ակոս զցել:
Թմբերի տեղը քաշված ակոսները շատ հաճախ անհրաժեշտ
խորության չեն ստոցգում, դրանց միջով ջուրը դժվարությամբ
և հոսում, չերքեմն ել ալդ ակոսները բոլորովին ջուր չի բարձ-
րանում: Այդ բոլորի հետևանքը լինում է ալս, վոր նախկին
թմբի լերկու կողմը ընկած շարքերն անհրաժեշտ քանակորթամբ
ջուր չեն ստանում:

Բամբակի դաշտը ուշաղրությամբ դիտելով միշտ ել կարենիլ ի առնել այն ակոսները, զորոնք քաշված են նտխկին թմբնարի տեղուած Այստեղ բամբակենու թփերը անհամեմատ ավելի թույլ զարգացած ու նվազ են լինուած:

Զայտած այդ բոլորին այնուամենայնիվ, ծլաջրի մարգերով կատարելը զեռ մի առ ժամանակ կիրառվելու յի վորպես ժամանակավոր միջոց, մինչև, վոր մեր կուտնաւսականները լիովին կտիրապետեն ակոսներով ջրման ճիշտ տեխնիկային:

Ծլաջրի ակոսներով կատարելը պահանջում ե, վորպեսզի ջրումը կատարվի այնպես, վոր միջակոսալին տարածությունները չփողողվեն ջրով, վորպիսի դեպքում կարող ե լվացվել և բռվել նաև հողի մեջ ցանված սերմերի վորոշ մասը Ակոսային ջրման տեխնիկային չտիրապետելիս հաճախ գժվար և լինում դաշտի հավասարաչափ խոնավացում ստանալ, վորի հետեանքով ծրություններն անհավասար: Բայցի դրանից ակոսալին ջրումը պահանջում ե ավելի լերկար ժամանակ (քան մարգերով ջրումը), վորպիսի հանգամանքը կարող ե ձգձգել ծլաջրի կատարման ժամկետը և հետևապես հետ գցել բամբակենու ծրությունը:

Այս բոլորը հաշվի առնելով, վորպես ժամանակավոր միջոցառում, կարելի լի թույլ տալ, վորպեսզի մեզ մոտ ծլաջուրը մարգերով կատարվի, մինչև վոր կուտնաւսականները լրիվ կյարացնեն ակոսային ջրման տեխնիկան:

Անկախ դրանից մեր առաջավոր կուտնաւսականները այս դարնանից պետք ե սկսեն ակոսներով ջուր կատարել թե ծլաջրի և թե բուլսերի վեցետացիալի ընթացքում, այն հաշվով, վորպեսզի նրանց փորձի հիման վրա մեր բոլոր կուտնաւսականները կարձ ժամանակում անցնեն բամբակենու բոլոր ջրությունները ակոսներով կատարելու դորձին:

Այժմս անցնենք ակոսներով ջրման տեխնիկայի քննությանը.

Հակառակ մարգերով ջրմանը, վորի քիչ թե շատ վորակւալ կատարուած հնարավոր և միայն հարթ և վոչ մեծ թեքություն ունեցող հողերում, ակոսներով ջրումը հնարավոր և և փոքր և մեծ թեքություն ունեցող հողերում:

Եթե հողամասը չնչին թեքություն ունի, ակոսները պետք ե գցել թեքության ուղղությամբ, իսկ ավելի թեքության դեպքում—թեքությանը շեղ ուղղությամբ: Ինքնուածինքան պարզ ե,

Գոր վորքան մեծ և հողամասի թեքությունը, ալնքան շեղ պետք են զցել ակոսները, վորպեսզի ջուրը դանդաղ հոսի, ակոսները չլվացվեն և ջուրը լավ ծձգի հողի մեջ:

Այստեղից ել վորոշվում են նաև ակոսների խորության հարցը, Փոքր թեքության զեպքում ակոսները պետք են անել խորը 15—18 սմ., իսկ մեծ թեքության զեպքում ծանծաղ՝ 10—12 սմ. վոչ ավելի: Պարզ ե, վոր մեծ թեքություն ունեցող հողերում, վորտեղ ակոսները զցվում են ծանծաղ (10—12 սմ.), ջուրը կապվում է ակոսի տարրողությանը համապատասխան փոքր շիթով, իսկ դա պահպանում է ակոսները վորողումից, ջուրը դանդաղ և հոսում է լավ և ծծվում հողի մեջ: Ինդիականական, փոքր թեքություն ունեցող հողերում, վորտեղ ակոսները խորն են զցում (15—18 սմ.), դրան համապատասխան ել տրվում է ջրի մեծ շիթ:

Ակոսի կտրվածքը

06-07ՄԵՏ



Ինչ վերաբերվում է ակոսների յերկարությանը, ապա դա նույնպես վորոշվում է հողի հարթությամբ և տեղի թեքությամբ: Ինչպես տեսանք, մեծ թեքություն ունեցող հողերում անց են կացվում ծանծաղ ակոսներ և ջրումը կատարվում է փոքր շիթով: Այս հանգամանքը ըստ ինքան վորոշում է ակոսի յերկարության հարցը: Պարզ ե, վոր ջրի փոքր շիթով հնարավոր չե ջրել շատ յերկար ակոսներ Ուստի մեծ թեքության պայմաններում դորձաղը վում են ծանծաղ ակոսներ և ջրի փոքր շիթ, բնականաբար ակօսները զցվում են ավելի կարճ, քան փոքր թեքության հողերում, վորտեղ, ինչպես ասացինք վերը, ակոսներն ավելի խոր են արվում և ջրի մեծ շիթով են ջրում: Նման պայմաններում ավելի յերկար ակոսներ են զցում:

Ակօսների յերկարության հարցը կախված է նաև հողի մեխանիկական կազմից:

Ծանր հողերում, վորոնց մեջ ջուրը դժվարությամբ է ներ-

ծծվում, ակոսները պիտք ե անել ավելի լերկար, քան թեթևվ հողերում, վորոնք (թեթեւ հողերը) ոժագած են ավելի մեծ ջրաթափանցկությամբ ուստի և կարճ ժամանակ ջուրը հոսելով այդպիսի հողերը արդին լիովին խոնավանում են:

Գործնականում ակոսների լերկարությունն արվում է 100—300 մետրի սահմաններում: Կարճ ակոսներ են համարվում մինչև 100 մետր յերկարություն ունեցող ակոսները և յերկար՝ 200 մետրից ավելի յերկարություն ունեցողները:

Պեաք և ասել, վոր ակոսները շատ յերկար անելն ել լավ չե: Յերբ ակոսները չափից շատ յերկար են լինում, այդ դեպքում տեղի յե ունենում: Հողամասի անհավասար խոնավացում՝ ակոսի վերին մասի հողն ավելի շուտ և խոնավանում, քան ցածր մասինը: Նման պայմաններում դաշտը միատեսակ խոնավացնել չի հաջողվում, վորի հետեւանքով բարձրակենին անհավասար և զարգանում դաշտի վերին և ստորին մասերում:

Մեր ասածներից հասկանալի յե, վոր ակոսներ գցելու ուղղության, նրանց խորության և յերկարության հարցերը, ինչպես նաև ակոսների մեջ թողնվող ջրի շիթի մեծության հարցերը կախված են վոռոգվող դաշտի պայմաններից, հողի թեքությունից, հողի մեխանիկական կազմից և ալին, ուստի և տալ մի ընդհանուր կայուն մեծություն բոլոր պայմանների համար հնարավոր չե: Այդ մեծությունները լուրաքանչյուր դեպքում պեաք և սահմանվեն տեղում, յելնելով կոնկրետ պայմաններից, ջրվող դաշտի առանձնահատկություններից:

Ակոսներով ջրման հաջողությունները, թացի վերը ասած հարցերի ճիշտ լուծումից, մեծ չափով կախված են նաև ջրվանցանցի ներկայությունից և նրա ճիշտ կառուցումից:


Ջրվանցանցի, վորն անց ե կացվում դաշտից ավելորդ ջրերը գուրս տանելու համար, պեաք և գործի անխափան, տեղիք չտալով ավելորդ ջրերի կուտակմանը դաշտի ցածրադիր մասերում:

Ակոսների դասավորությունը տեղի թեքության նկատմամբ և ջրվանցանցի պերքը ակոսների նկատմամբ այն դեպքում կարելի յե համարել կատարյալ, յերբ ակոսների մեջ թողնված ջուրը հնարավորություն ունի դանդաղորեն հոսելու ակտու ամբողջ յերկարությամբ՝ միորինակ արագությամբ ու հավասարապես ծծվելու հողի մեջ, իսկ ավելցուկ ջուրը թափվելու ջրվանցանցի

մեջ ու դուրս հոսելու դաշտից, չընանալով դաշտի այս կամ այն
մասում:


Զրվան առուն իր հերթին պետք է ապահովի իր մեջ թափ-
ված ավելորդ ջրերի հոսանքը գեղի հարելան ջրման առուն
կամ ջրտարը, վորպեսզի այդ ջրերը ոգտագործվեն մյուս դաշտե-
րի վոռոգման համար:

Ակոսներով ջրման լրիվ ցանցը կարելի է պատկերել ստո-
րել բերված սխեմայով:



Զուրը ջրտարից նախ կապ ւա՞ն են ոժանդակ ջրման առուն
և ապա ալոտեղից բաշխում ըստ ակոսների: Զուրը ակոսներով
բարակ շիթով հոսելով պետք է ծծվի հողի մեջ այնքան ժամա-

Նակ, մինչև վոր ջրվող դաշտամասի ամբողջ մակերեսը խօսնա-
վանա—սելանա:



Զրումն ակոսներով


Լավ գարժված ջրվորը, յեթե նա իր տրամադրության տակ ունի բավական քանակությամբ ջուր, կարողանում է միաժամանակ ջուր կապել և զեկավարել 100 և ավելի ակոսի ջրումը: Միաժամանակ մեծ քանակությամբ ակոսներ ընդգրկելը պահանջում է ջրվորից անհրաժեշտ հմտություն: Կարեվորը ալստեղ ջրի հավասար բաշխումն ե ակոսների մեջ: Դա անհրաժեշտ ե նըս համար, վորպեսզի ամբողջ ջրվող տարածությունը միաժամանակ և համահավասար խօսնավանա:

Այդ պահանջը բավարարելու համար վերջերս Խորհրդական Միության առաջավոր բամբակագործական շրջաններում լայն շափով սկսել են կիրառել ակոսալին ջրման խողովակալին ձեզը: Դա մեծ արդյունք ե տալիս, վորի համար ել ալդ ձեզը լայն չափով պետք ե գործադրել նաև մեզ մոտ—Խորհրդական Հայաստանում:

Խորհրդականերով ջրման ձեզը—դա ակոսալին ջրման ամենակատարելագործված ձեզն ե: Անցնենք խողովազներով ջրման

քննությանն ու դրա հետ մեկտեղ լուծաբարվող ջրման վորոշ
հարմարությունների նկարագրությանը:

Մեզ մոտ ջրտար առվից ոժանգակ ջրման առուն չուր կա-
պելու համար սովորաբար մեծ կապեր—կոճակներ են տալիս,
զորպեսզի ջուրն ուրի բարձրանա։ Այդ կոճակները բավականին
աշխատանք և ժամանակ են խռում ջրվորից և մյուս կողմից եւ
կոճակներ տալու համար սովորաբար հողը վերցնում են ջրտար
առուի լեզրերից, վորով զգալի չափով փչացնում են առուն։ Այդ
բոլորից խռուափելու համար ներկայումս ոգտագործում են այս-
պես կոչված զոգնոցներ։ Գոգնոցը իրենից ներկայացնում ե բրե-
զենտի մեծ կտոր մոտ 2—2,5 մետր յերկարությամբ և 1—1,5
մետր լայնությամբ։ Այդ բրեզենտը ծալրից մոտ 1,5—2 մետրի
վրա ծալում են և ծալից մի քիչ խորը ամուր կարում, այնպես,
վոր ալդ կարած ծալքով մտնի բահի կոթի հաստության լերկար
փակու։



Զրպակ գոգնոցը սարքավորված

Այսուհետեւ փակու դնում են ջրտարի թմբերի վրա ալո-
պես, վոր բրեզենտի լերկար մասը փովի ջրտարի հատակին ջրի
հոսանքին հակառակ ուղղությամբ, իսկ մյուս կարճ մասը կախ

շնկնի մյուս կողմը, Բրեգենտի յերկար մասը փալտե ցիցերով
ամրացնում են ջրտարի մեջ հատակին ու թմբերին, Այդ ձեզով
ստացվում ե բրեգենտյա մի պատվար, վորի շնորհիվ ջուրը ուռում
և և բարձրանում ջրտարի մեջ:

Այսպիսի ջրպահ գոգնոցի շնորհիվ մի քանի վարկանչ
ընթացքում հնարավոր է լինում ջրտարի մեջ ջուր բռնել վոռով-
ան համար: Պարզ է, վոր այդպիսի գոգնոցները շատ հեշտ կա-
րելի չե փոխադրել և ոգտագործել ջրտարի լուրաքանչյուր կե-
տում ըստ ցանկության:

Հիմա նկարագրենք ջրտարից ոժանդակ ջրման առուն ջուր
կապելու կատարելագործված միջոցը:

Մեզ մոտ ջրտարից ոժանդակ ջրման առուն ջուր կապելու
համար ջրտարի թումբը ճեղքում, անցք են բացում, վորի միջո-
ցով ջուրը հոսում է ոժանդակ առուն և այդտեղից ակոսները:

Վորպիսզի ջրտարի թումբը չճեղքեն ու փչացնեն և մյուս
կողմից ել ջրտարից ջուր կապելու աշխատանքը հեշտ և արագ
կատարվի, ոգտագործում են սիֆոններ:

Դրա համար վերցնում են ուղինե լայն խողովակ (շանչ)
մոտ 10—12 սմ. տրամադրով և 3—4 մետր լերկարությամբ: Մեկ
ժայրը փակում են և զնում ջրման ոժանդակ առվի մեջ, իսկ
մյուս ժայրից խողովակը լիբը լցնում են ջրով: Այնուհետեւ
արագ կերպով այդ ժայրը զցում են առվի մեջ և խորասուզում
ջրի մեջ, Խողովակի ոժանդակ առվի մեջ գտնվող փակ
ժամբը բանալով ջուրը սկսում է առատ կերպով հոսել ջրտարից
ոժանդակ առուն, վորովհետեւ ջրտարի մեջ ջրի ռակերեվույթը
ավելի բարձր է քան թե ոժանդակ առվի ջրի մակերեվույթը:


Այդ գործողությունը հմտորեն կատարելու համար չնշին
ժամանակ և պահանջվում, մոտ կես րոպե:

Հստ կարիքի ջրտար առվի վրա, նրա զանազան մասերում
սիամանակ կարելի յե սարքի գցել մի քանի հատ սիֆոն-
Պարզ է, վոր տվալ հողակտորը ջրելուց հետո սիֆոնը փոխա-
ղըրվում է ուրիշ տեղ:

Ինքնստինքյան հասկանալի յե սիֆոնի ոգտագործման առա-
վելությունները Բացի նրանից, վոր սիֆոնը զգալի չափով թե-
թեքացնում և ջրվորի աշխատանքը, նրա ոգտագործումը հնարաւ
վորություն և ստեղծում հավասար ջուր բաշխել ակոսների մեջ:
Յուրաքանչյուր սիֆոնից հոսած ջուրը բաշխելով նույն

թվով ակոսների մեջ հնարավորություն և ստեղծված էարդավոռ բնել ջրի ծախսումը:

Բացի սիֆոններից գործադրվում են նաև թիթեղիա կամ յեղեղնի մանր խողովակներ 2,5—3 սմ. տրամագծով և 30 սմ. լեռ կարութամբ, վորոնք շարված են ուղակի ջրման ոժանդակ առավի վրա, ամրացվում են ցեխով լուրաքանչյուր ակոսի համար առանձին, այնպես վոր խողովակի մի ծայրը գտնվի ոժանդակ առավի ջրի մոջ, իոկ մյուս ծայրը գուրս գտ ակոսի վրա:



Սիֆոնի սարքավորումը


Ալտարիսով ջուրը ջրտարից հոսելով սիֆոնի միջով ոժանդակ առուն և հավասարապես բաշխվելով լուրաքանչյուր սիֆոնից հավասար թվով խողովակների, լիովին ապահովում և լուս

բաթանչյուր ակսսի մեջ մտնող ճըի քանակը և ապա ամբողջ գաշտի համահամասար խոնավացումը,

Յուրաքանչյուր սիֆոնի ջուրը բավականացնում է 10—15 և ավելի խոզովակի, նայած սիփոնի տրամագծին:

Այժմս անցնենք ակոսներով ջրման առավելությունների քննմանը:

Ակոսներով ջրումը խոշոր առավելություններ ունի մարդկանով ջրելու հանդեպ: Ակոսալին ջրումը տալիս է ջրի զգալի խնայում: Դա խոշոր անտեսական նշանակություն ունի մեր բամբակացան շրջանների համար, ժանավանդ վեցու և վաղարշապատի շրջանների համար, վարտեղ ամռան ամիսներին զգացվում է ջրի զգալի պակաս:



Խոդովակների սարքավորումը ոժանդակ տուի վրա

Ակոսալին ջրումը պահպանում է հողի լավ ֆիզիքտկան հատկություններ, իսկ դա խոշոր նշանակություն ունի բուկսիրի նորմալ զարգացման տեսակետից: Քանի զոր ակոսալին ջրման ժամանակ ջուրը շվիլու և միմիայն ակոսների հողի նկա շերաբ հետ, իսկ թացած տարածությունը խոնավանում է մաղական անցքերով դանդաղորեն ձձվող ջրով: ուստի և տեղի չի ունենում հողի կնձիկների քայլավում և ընդհանուր ծակոտկենության անկում, ինչպիսին նկատվում է մարգերով ջրելու դեպ-

քում: Այս բանը կարելի յէ պատկերացնել հետեվյալ հասարակ փորձով:

Վերցնենք յերկու նմուշ միանման չոր հող, մեկ նմուշը թողնենք չոր վիճակում, իսկ մյուսը դնենք թաց թղթի վրա, վորպեսդի մազականությամբ լրիվ խոնավանա և սելվանա: Ալ-նուհետեւ յեթի արդ յերկու նմուշ հողը զգուշությամբ ցցենք ջրի մեջ կնկատենք, վոր հողի չոր նմուշը ջրի մեջ լրիվ կքալքայինի, իոկ խոնավը վոչ չողի չոր նմուշը ծակոտիների մեջ գտնված ողը, ջրի մեջ արագորեն զուրս զալով. քալքայում և հողի կնձիկները, ինկ մազականությամբ նախորոք խոնավացրած հողի միջի ողի մեծ մասը արդեն զուրս եր քշվել թղթի վրա խոնավացնելու ընթացքում, վորի շնորհիվ այդպիսի հողը ջրի մեջ ցցելուց շատ քիչ և քալքայինում թացի դրանից մազականորեն խոնավացած հողը ընդհանրապես ջրի քալքայիչ ազդեցության նկտմամբ ավելի դիմացկուն եւ:

Ճիշտ նույնպիսի յերեվույթ և տեղի ուսնենում սարգերով և ակոսներով ջրելու ժամանակ:

Մարգերով ջրելու ժամանակ, ջուրն անմիջականորեն շփվելով և վողողելով չոր հողը, քալքացում և նրա կնձիկները, իսկ ակոսաջրի ժամանակ տեղի յեւ ունենում հողի աստիճանական՝ մազական խոնավացում, վորպեսզի դեպքում, ինչպես ասացինք, հողի կնձիկները չեն քալքայինում:

Այսպիսով, հողի կնձիկները պահպանելով քալքայումից, ակոսաջրի ժամանակ պահպանվում և հողի ընդհանուր ծակոտկենությունը և հողի մեջ ող թափանցելու հարագորությունը:

Այս բոլորի շնորհիվ, ակոսաջրի դեպքում բամբակենին ստանում և և ջուր և ող ավելի մեծ քանակությամբ, քան սարգերով ջրելու դեպքում:

Թե վորքան մեծ նշանակություն ունի ողը բամբակենու արմատների համար կարելի յեւ հասկանալ, դիտելով մարգերով ջրած դաշտը, վորտեղ միշտ ել կարելի յի գտնել ցածրադիր տեղեր, վորտեղ ջրի լճացումից, հետևաբար և հողի մեջ ողի պակասությունից բամբակենին գեղնած և նվազ և լինում:

Ողը անհրաժեշտ և նաև հողի մեջ ապրող տնհամար ող-տակար բակտերիաների կենսարար գործունեյության համար, վորոնք հողի նորմալ խոնավության և ոդափոխության պայման ներում հողում գտնված որդանական նյութերը քալքալում են և բռւլսիրի համար անմատչելի դրությունից վեր են ածում մատչելի զիճակի: Շնորհիվ բակտերիաների ակտիվ գործունեյության, հողի մեջ կուտակվում են մեծ քանակությամբ սննդանլութեր, վորից բույսերը սնվում են առատորեն,

Վաղարշապատի բամբակագործական վորձակալանի դիտությունները ցույց են տալիս, վոր ակոսներով ջրման դեպքում հողի մեջ գոյացող սննդանյութերի քանակն ավելի շատ է լինում քան մարգերով ջրման դեպքում: Բացի գրանից հողի մեջ գոյացող սննդանյութերը, ըստ խորության բաշխվում են տարբեր կերպ, նաևած ջրման ձևին:

Ակոսային ջրման պայմաններում սննդանյութերը հիմնականում կուտակվում են հողի վերին շերտերում—մակերեսից մինչև 30—40 սմ. խորության մեջ, այսինքն այնտեղ, զորտեղ գրտնվում ե բամբակենու արմատների գերակշռող մասը: Դրան հակառակ՝ մարգերով ջրման պայմաններում սննդանյութերը լվացվում են և քշվում հողի ավելի խորը շերտերը, հեռանալով արմատների հիմնական մասսալիք զարգացման միջավայրից: Այս հանգամանքն զգալի չափով անդրադառնում ե բամբակենու սննդառության պրոցեսի վրա:

Թե ինչու յի տեղի ունենում հողի մեջ սննդանյութերի այդպիսիսի տեղաշարժ, կարելի յի հասկանալ ստորև բերված սխեմանցից՝ վորտեղ ցույց ե տրված ջրի՝ հողի մեջ ներծծվելու ընթացքը՝ մարգերով և ակոսներով ջրելու դեպքում:

Ջրի շերծողության շոշի Մեջ

Յրումը ՄԱՐԳԵՐՈՎ

Յրումը ԱԿՈՍՆԵՐՈՎ



Այս սխեմանցից դժվար չի հասկանալ, վոր մարգերով ջրելու դեպքում ջուրը ներծծվում ե հողի մեջ ուղղահայաց կերպով—վերից վար և իր հետ լվանում, հողի խորը շերտերն ե տանում սննդանյութերի զգալի մասը, իսկ ակոսներով ջրելու դեպքում, ջուրը ներծծվում ե հիմնականում հորիզոնական ուղղությամբ և իր ճանապարհին գտնված սննդանյութերը վոչ միայն չի լվանում ու տանում հողի խոր շերտերը, ալ ընդհակառակը, բարձրացնում ե և տեղափոխում հողի վերին շերտերը:

Հետաքրքրական ե տեսնել, թե ինչպիս ե անդրադառնում

յառակը սրբութիւն քոյսէ խոհանոր դ իսկզոսիտ
վկանութեակաս տու բարձրմատ վետուոր Սմբատարմատ դ Արտօնումատ վկանութեամբ աշխարհագու

Կ Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր

Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր

Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր
Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր Ա Ր

բամբակենու արմատների վրա սննդանլութերի նման տեղաշարժը հողի մեջ:

Վաղարշապատի բամբակագործական փորձակայանի ուսումնասիրություններից պարզվում է, վոր մարգերով ջրման դեպում բամբակենու արմատները թափանցում են հողի ավելի խոր շերտ աերը, ուր լվացվում են սննդանյութերը և գորտեղ հողն ավելի խոնավ է, իսկ ակտուալին ջրման պայմաններում արմատները դարգանում են հողի համեմատաբար ավելի մակերեսային շերտում:

Այսակա անհրաժեշտ ե կանգ առնել մի ուրիշ հարցի վրա նաև Մինչև վերջին տարիները բամբակագործության մեջ սխալ տեսակետ եր իշխում, վոր բամբակենին քիչ ջուր պահանջող կուտուրա ե, ուստի և բամբակի դաշտերը քիչ ելին ջրում, իսկ առաջին վեգետացիոն ջուրը շատ ելին ուշացնում, վորպեսզի բամբակենին «կոփիի» չոր պայմաններում և խոր արմատներ դցի, վորով իրը թե, բամբակենին դիմացկուն եր դառնում հետագալում ջրի պակասի հանդեպ,

Այդ տեսակետը ներկալում դեն ե շպրաված, վորպես վը նուսակար և կոլտնտեսային առաջավոր ազրութիւնիկայի հետ վոչ մի առնչություն չունեցող տեսակետ:

Բանը նրանումն ե. վոր հողի մեջ, ինչպես դա լավ հայտնի ե մեր կոլտնտեսականներին, աննդանլութերի գերակշռող մասը գտնվում է վարելաշերտում: Ըստ խորության հողի մեջ արագ կերպով ընկնում ե սննդանյութերի քանակը: Այսակայից պարզ է, վոր հնում ընդունված այն վնասակար տեսակետը, թե պեսք ե ձգտել բամբակենու խորը զարգացած արմատացին սիրուեմ ստանալու, զրկում եր բուլսերին լրիվ ոգագործելու հողի վերին շերտում գտնված սննդանյութերը և գործադրված պարարտանյութերը.

Բամբակագործության ստախանովականների վերջին տարիների հարուստ և լիարժեք փորձը բամբակենու հաճախակի ջրման ուղղությամբ, ցուց ե տալիս, վոր հաճախակի ջրման պայմաններում, յերբ հողի վերելի շերտերը միշտ պահպան են նորմալ խոնավ վիճակում, բամբակենին տալիս ե համեմատաբար մակերեսային արմատներ, վորով և հնարավորությաւն ե ստեղծվում բուլսերի համար վերելի խոնավ շերտերից ջուր վերցնելու հետ մեկտեղ, ողտագործել նաև այնտեղ յեղած սննդանյութերի

հարուստ պաշարը Ահա այս տեսակետից, ակոսներով ջրման պայմաններում զարգացող մակերեսային արժատները խոչոք չափով նպաստում են բամբակինու առատ սննդամանը և հետևազեռ նախադրյալներ են ստեղծում բերքատվության բարձրացման համար:

Բամբակինու ջրման հետ սերտ կերպով կապված են նաև հողի կուլտիվացիայի և մոլախոտերի քաղնանի հարցը: Բամբակինու դաշտերի կուլտիվացիան և քաղնանը պետք են ժամանակին և խնամքով կատարվեն յուրաքանչյուր ջրումից հետո, հողի ըրիվ հասունացման շրջանում, ինչպես առում են հողի «քեշլ» գորու ժամանտկ: Սովորաբար դա լինում է ջրումից 4—5 որ հետո:

Ժամանակին և խնամքով կատարված կուլտիվացիայի և մոլախոտերի քաղնանի միջոցով հնարավորություն և ստեղծվում պահպանելու հողի մեջ այն խոնավությունը, վորը տրվել եր ջրման ժամանակ:

Կուլտիվացիայի միջոցով վիրեցվում է հողի մակերեսը, վոչնչացվում են հողի մակերեսային շերտի մազական անցքերը, վորով խիստ կերպով պակասում է ջրի գոլորշիացումը հողի մակերեսից: Բացի այդ, հողի վիրեցումը մեծացնում է ողափոխությունը. ապա և լավացնում են բակտերիաների աշխատանքի պայմանները: Ինչ վերաբերվում է մոլախոտերին, ապա դրանք նույնպես մեծ քանակությամբ ջուր են գոլորշիացնում հողի միջից, սպասում են հողի միջի սննդանյութերը, ուստի նրանց վոչնչացմամբ պահպանվում են հողի մեջ ջրի և սննդանլութերի պաշարը ավելնորդ վատնումից:

Ակոսավին ջրման ժամանակ սննդանյութերը հողի ստորին շերտերից բարձրանում են և կուտակվում վ'րին շերտերում և ժամանավորապես թմբերի վրա՝ 0—5 սմ. բարակ հողաշերտում զորտեղ բամբակինու արժատներ քիչ կան: Ուստի կուլտիվացիայի և ձեռքի մշակության ժամանակ անհրաժեշտ է թմբերի բարակ և մեծ քանակությամբ սննդանյութեր պարունակող հողը փոխադրել գեպի ակրոս, վորպեսզի հաջորդ ջրման ժամանակ արդ սննդանյութերը քշին դեպի արմատները և ողտագործվեն նրանց կողմից:

ԲԱՄԲԱԿԵՆՈՒ ԶՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐՆ ՈՒ ՆՈՐՄԱՆԵՐԸ

Ինչպես յուրաքանչյուր կուլտուրական բույս, նույնպես և բամբակենին, կարողանում է նորմալ զարգանալ և տալ բարձր

բերք միաւն հողի վորոշ խոնավության պայմաններում: Ինչպես հողի մեջ խոնավության պակասության, նույնպես և ավելցուկի գեպօւմ, բամբակենու նորմալ զարգացումը խախտվում և բերքատվությունը դդալի չափով ընկնում է:

Հողի մեջ խոնավության պակասության պայմաններում բամբակենին վոչ միաւն դրկվում է իր կենսաբանական պրոցեսների համար անհրաժեշտ ջրից այլ և մննդանյութերից, վորոնք դժնվում են հողի մեջ ջրում լուծված վիճակում, իսկ խոնավության ավելցուկի գեպօւմ բամբակենին նեղվում է հողի մեջ ողի պակասությունից:

Ինչպես հայտնի լի հողը կազմված է առանձին մասնիկություններից, վորոնք այսպես թե այնպես միանալով միմիանց հետ, կազմում են զանազան մեծության կոմբիներ: Հողի կոմբիների և մասնիկների մեջ դոյցությունը ունեն անցքեր ծակոտիների, վորոնք զբաղված են լինում ողով և ջրով:

Հողի մեջ անընդհատ տեղի է ունենում նյութերի քայլաչ ման և ձևափոխման պրոցեսներ: Այսպես որինակ՝ բուսական մնացորդները, (հին արմատները), գոմաղը և հանքային պարարտանյութերը քայլավելով վեր են ածվում բույսերի համար մատչելի սննդանյութերի:

Հողի մեջ ապրում են անհամար քանակությամբ մանըներ՝ բակտերիաներ, վորոնց միջոցով տեղի լի ունենում հողի միջի զանազան նյութերի փառումն ու քայլաչումը և հողի հարստացումը բույսերի համար անհրաժեշտ սննդանյութերով: Այս բոլոր պրոցեսները նույնպես տեղի լի ունենում հողի մեջ վորոշ խոնավության և ողի ներկայության պայմաններում:

Բույսերի, ինչպես նաև հողի մեջ ապրող բակտերիաների համար, ամենանպատավոր պայմաններն են ստեղծվում այն ժամանակ, յերբ հողի մեջ միաժամանակ և միատեղ առկա լին դժնվում անհրաժեշտ քանակությամբ ջուր, ող և սննդանյութեր:

Ջրի ավելցուկի գեպօւմ ողը հողից դուրս և վանդակում, զգացվում է ողի պակասություն և բույսերի զարգացման պայմանները վատանում են: Բացի դրանից ջրման ժամկետների և նորմաների հարցը պարզելու համար անհրաժեշտ և նկատի ունենալ նաև իրեն բամբակենու, գեպի ջուրն ունեցած պահանջը նրա զարգացման տարբեր շրջաններում:

Էնդանիրապես բամբակենու զարգացման ամբողջ շրջանը

(ծծումից մինչև հասունացման վերջը) ըաժանում են լերեք շըշանի.

1. Ցանքից մինչև ծաղկելը.

2. Ծաղկման շրջան և

3. Հասունացման շրջան

Ասածին շրջանում, վորը մեր պայմաններում տեղում ե 60—70 որ, բամբակենին համեմատաբար ավելի քիչ ջուր և պահանջում, քանի վոր նրա վերյերկրյա մասերը թուլ են զարգացած, գոլորշիացման մակերեսը փոքր ե և ինդանակներն ել զգալի շագ չեն:

Ալդ շրջանում կարիք ե լինում բամբակենուն տակ 1—2, յերբեմն և 3 ջուր (բայց ծլաջրից), նաևած տարվա յեղանակներին և հողալին պայմաններին:

Անհամեմատ ավելի շատ ջրի պահանջ ե զգում բամբակենին իր զարգացման յերկրորդ շրջանում, վորը տեղում ե 60—65 որ, յերբ նա մեծ քանակությամբ վերյերկրյա մասեր և առաջտցնում (տերևներ, կոկոններ և ծաղկիներ), շողերը ընկնում են և այդ պատճառով բամբակենին մեծ քանակությամբ ջուր և գորշիացնում:

Ալդ շրջանում բամբակենուն կարիք ե լինում տակ 3—4 ջուր (յերբեմն և ավելի): Ալդ շրջանում ջրի պակասը կամ նրա ձգձգումը առաջ ե բերում մեծ քանակությամբ կոկոնների և ծաղկիների վիճում և ընդհանրապես պտղատու ձյուղերի թուլ գարգացում, վորոնք մեծ չափով գցում են բերքատվությունը:

Բամբակենու զարգացման յերրորդ և վերջին շրջանում, յերբ բամբակը սկսում ե հասունանալ ու բացվել, շատ հաճախ անհրաժեշտ ե լինում տակ 1 ջուր: Հասունացման շրջանում ջրի պակասը առաջ ե բերում կնքուղների արհեստական աննօրմաէ շռութ բացում, վորը զգալի չափով գցում ե բերքի վորակը, պակասեցնում ե թերիկների յերկարությունը, ամրությունը և ալլն, ինչպես նաև ընկնում ե բերքի քանակը:

Այսպիսով, բամբակենու զարգացման ամբողջ շրջանում անհրաժեշտ ե լինում 6—8, յերբեմն և ավելի ջուր տակ, նայած նոր դալին պայմաններին և առաջա յեղանակներին:

Ինքնուտինքրյան հասկանալի լի, վոր ստորևերկրյա ջրերին մոտ գտնվող հողերում բամբակենու ջրի պահանջն ավելի փոքր ե լինում, բամբակենին ավելը քիչ անգամ և ջրվում քան ասենք

տվաղաքին չոր հոգերում, վոստեղ բամբակենին պահանջում և հաճախակի ջրում:

Այստեղից պարզ է, վոր բոլոր գեղքերում չի կարելի բամբակենուն տալ միտանասակ թվով ջրում: Յեներով տվալ դաշտի պայմաններից և բամբակենու պահանջից յուրաքանչյուր առանձին գեղքում պետք է սահմանվի ջրումների թիվը և նրանց կատարման ժամկետները:

Ոռփորաբար բամբակենու արտաքին տեսքից նկատվում է նրա ջրի պահանջը: Ջրի կարիք ունեցող ծարավ բամբակենու տերևների գույնը մուգ կանաչ—կապտավուն և լինում և առավատվանից նրանք գորոշ չափով դալկացած տեսք են ունենում: Այդպիսի դաշտը ջրելուց հետո իսկուն վերականգնվում է բույսի փարթամ նորմալ գրությունը:

Այսպիսով, բամբակենու ջրման ժամկետ յուրաքանչյուր անգամ պետք է սահմանել յենելով բույսի դրսությունից և ջուր տալ ըստ բույսի պահանջի:

Պետք է տաել, վոր մինչև վերջին ժամանակները գոյություն ուներ սխալ և ֆնասակար սովորություն՝ ձղձգել և ոչացնել բամբակենու առաջին վեգիտացիոն ջուրը: Բամբակենու առաջին ջրի ուշացումով ստիպում ելին բույսերին, զարգացնելու հողի մեջ խոր գնացող արմատալին սիստեմ, վորով իբր թե բույսերն ամելի դիմացկուն ելին դառնում հետագա ջրի պակասին:

Սակայն ինչպես տեսանք նախորդ զիսում, խորը զարգացող արմատները հեռանալով վարելաշերտից ի վիճակի չեն լրիվ կերպով սպատգործելու այնտեղ յեղած սննդանլութերի հարուստ պաշարը:

Այստեղից պարզ է, վոր առաջին ջրի վաղ կատարելը և ընդհանրապես հաճախուկի ջրումը, բերքատվության բարձրացման տեսակետից անհրաժեշտություն է:

Առաջին ջրի վաղ սկսելը և ընդհանրապես բամբակենու հաճախակի ջրումը ունի նաև մի այլ խոշոր նշանակություն:

Վերջին տարիները մեր բամբակացան շրջաններում լայն ծավալ և ստացել հողի պարաբտացումը տեղական և հանքաբին պարաբտանլութերով: Բամբակագործության ոտախանովքան առաջավոր փորձից յենելով մեր կոլտնտեսականները մեծ արդյունավետությամբ գործադրում են պարաբտանլութերի բարձր դոզաներ:

Մեծ քանակությամբ գործադրվող պարարտանյութերը լուծավում են հողում յեղած ջրի մեջ, զգալի չափով բարձրացնելով հողի լուծուութի խտությունը, իսկ բույսերը բավականին զգայուն են հողի լուծուութի խտությունը նկատմամբ: Յերբ հողի լուծուութի խտությունը նորմալից բարձրանում է, այդ դեպքում գաղարում և լուծուութի թափանցումը արմատների մեջ, բույսը զրկվում է հողի լուծուութը ոգտարենելու հնարավորությունից, այսինքն զրկվում է թե ջրից և թե նրա մեջ լուծված սննդանյութերից: Բույսերն առանձնապես զգալուն են գեպի հողի լուծուութի խտությունը իրենց լերիտասարդ հասակում, Մեծ քանակությամբ պարարտանյութեր մտցնելու դեպքում անհրաժեշտ է գաշտը ջրել առանց հապաղումների, վորպեսզի նոսրանա հողի լուծուութի խտությունը և հնարավոր լինի բույսին ոգտվելու այդ լուծուութից Այժմս պարզ է, թե ինչու ուժեղ պարարտացված հողերում, վորտեղ առանցնապես բարձրանում է հողի լուծուութի խտությունը, անհրաժեշտ և առաջին ջուրը տալ վաղ և ընդհանրապես կիրառել հաճախակի ջրում:

Այսպիսով, առաջին ջրի վաղ կատարումը և ընդհանրապես հաճախակի ջրումը նպաստում է բամբակենու արմատների մակերեսային տարածմանը հողի սննդանյութերով հարուստ շերտերում, պահպանում և հողի լուծուութի խտությունը արմատների համար մատչելի վիճակում, նպաստում և պարարտանյութերի լրիվ ոգտագործմանը և ապա բամբակենու բարձր բերքատվությանը:

Հաճախակի ջրումների հետ սերտ կերպով շաղկապված և նաև ջրման նորմաների հարցը, այսինքն մեկ հեկտարին տրվող ջրի քանակը խորանարդ մետրերով հաշված:

Վաղարշապատի բամբակագործական փորձակալանի դիտությունները ցույց են տալիս, — վոր յեթե բամբակենու ամբողջ վեգետացիալի ընթացքում տրվող ջրի նույն քանակը պահպանելով կոտորակում են ջրումների թիվը, այսինքն հաճախակի ջրումներ են կատարում, ցածր նորմաներով, այդ դեպքում զդալի կերպով բարձրանում և բերքատվությունը:

Հողի շատ խորը շեղտերի խոնավացումը, վորը պահանջում է գործադրել ջրի բարձր նորմաներ, ներկալիս ագրոտեխնիկալի պահպաններում չունի վորոշակի և մեծ առավելություններ: Անդ հակառակը հողի վերեվի շերտերի պահպանումը մշտական խառնավ վիճակում, վորը պահանջում է հաճախակի ջրում ցածր նոր-

մաներով, ինչպես անսանք վերեր, պայմանավորում և բամբակենու արմատների համեմատաբար ավելի ժակերեսալին գարգացումը և հետեւաղես հողի սննդանլութերի ավելի լրիվ ոգտագործումը:

Յեխելով այս գրութից, բամբակենու բարձր բերքատվությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել հաճախակի ջրում ցածր նորմաներով, ընդունելով ջրի նորմալի միջին չափը լուրաքանչյուր ջրման համար 500—600 խորանարդ մետր մեկ հեկտարին:

* * *

Ներկայումս լեռը մեր բամբակի գաշտերում կիրավում է կոլանտեսային բարձր ագրոտեխնիկա, բարձր վարակական ցուցանիշներով՝ կիրառվում են բազմանդամ խորը վար, հողի ուժեղ պարարտացում թե՝ տեղական և թե հանքային պարարտանելութերով, բույսերի միջարքային սնեցում նրանց վեգետացիայի ընթացքում, բազմանդամ և խորը արակատրային կուլտիվացիա և քաղաքան, լուրջ պայմանական ատրպում մասսատուների և հիվանդությունների դեմ և այլն, բարեակենու ակուտային ջրումը, հաճախակի ջրութաների, առաջին ջրի վաղ կատարելու և ջրման վաչ մեծ նորմաների գործադրելու հարցերը, վորպես կուտեսեսային բարձր ագրոկոմպլեքսի առաջատար գործոններ, ձեռք են բնուրում կարեգորագույն նշանակություն:

Յեթե բամբակի տպրոկոմպլեքսի մյուս բոլոր գործոնների առկայության պայմաններում ջրման խնդիրները կանոնավորված չեն և մտածված ձեռք չեն լուծվում, ապա դա ուժեղ չափով դցում և ամրող ագրոկոմպլեքսի եղթեկտիվությունը և դգալիսրին նվազեցնում բերքատվությունը:

Միայն ագրոկոմպլեքսի բոլոր գործոնների, նույն թվում և ջրման հարցի միմիանց հետ շաղկապված և համապատասխան գործադրման պայմաններուն և, վոր ապահովվում են բամբակես նու նորմալ կյանքն ու զարգացումը և ստախանովյան բարձր բերքատվությունը:

Այս այս տեսակի հարից, մեր գրքուկի նպատակն է ոգնելու մեր կոլտնահետական ընթերցողներին ճիշտ կերպով լուծելու բամբակենու վոսովման հետ կապված հարցերը:

ԲԱՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՒՆ

	Եջ
1. Ներածության	3
2. Վռոզգման սիստեմ	4
3. Զբանական ճեղքը	8
ա) Զբանական մարզելով	8
բ) Զբանական ակոսներով	12
4. Բամբակենու ջրման ժամկետներն ու նորմաները	28



Արօն. 10401

ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0008618

213

А и
18391

գրք 50 դ.

Армянская ССР—Наркомзем
Управление Водного Хозяйства
Эксплоатационный Отдел

А. Т. СМБАТЯН
ОРОШЕНИЕ ХЛОПЧАТНИКА